

## Գ. Ա. Ռ. Տ Ն Ի Ք

Հ Յ Ֆ

Ճաճարին մէջ, ուր ջահեղն առկայծեցան մեղմօրէն  
Խունկին ծաւի քողին տակ որ մութին մէջ կը դրայ,  
Բազկատարած, հոգելմայլ ես առանձին եմ ահա,  
Ու կը սպասեմ ցու գարձիդ Հայոցումի լուռ ճամբայէն:

Դուն պիտի զաս, և մայնիդ անհուն կը ոռյիթը կարծես  
Ներդաշնակած է մարմար սիւնելն իրենց արուեստով,  
Դուն մըտերիմ և աստուած, զուն բարեգութ, հոգեսե՞ս,  
Պիտի ժպտին, հայրական ով կերպարանը լուսաթով:

Եւ շրբումբիդ բառերէն պիտի ծաղկին երկինքներ,  
Եւ ձեռքերուու համբոյրէն իմ շրբունքներս պիտի զզան  
Արեւին կը ակը վը ճիստ, ով Առաքեալ ոսկեհեր,  
Պատումանիդ ծալքերուն մէջ պահուեր է լուսընկան:

Թերեւս ինծի պիտի 'սես որ պատրանը է ամէն ինչ,  
Եւ երեւոյթն է միայն տեսիլըը մեր հոգիին,  
Եղիշայակապ երազ մ'է կեանքը. հայլի մըն է ջինջ  
Տիեզերըն ուր լոկ բուէ մը պատկեները կ'անցնին...

Եւ ես արդէն համակերպ, առանց խօսքի, արցունքով  
Պիտի յայտնեմ իմ սրախ ուրախութիւնն անսահման,  
Որովհետեւ ծնրադիր՝ պիտի գտնեմ ոտքիդ բով  
Անհուն խորհուրդը կեանքին՝ որ ցոլացումն է մահուան...:

Արքէն Երան

### ԱՅԼԵՒԻԱՅԼԻՔ

### Ա Ս Ո Ւ Ն Տ Ս Ը Ն Կ Ը Պ Ա Տ Մ Մ Է

Իր դէպ ի անժամօթը սաւառնումը եւ սաւոյցներու դէմ ունեցած գերմարդկային մարտը

(Ժարումակութիւն տես Բազմավէպ 1925, էջ 278)

ՏԱԳԻԱՊԱՎԵՑ ՎԱԹՐԿԵԱԱԾ

ՈՒԽԾՐԸ-Լարսըն և Ցիթրէչըրն մեկնատես-  
դին կը սահմանեն, կը սկսինք սասանեղէն  
Կոյսերը մէկդի զնելու տաժանելի գործին:  
Թունիս Զին ամէն ինչ պատրաստ է. թէպէտ  
օդոյ բարեիսանութեան մեղմութիւնը սա-  
ռին բեկանելուն դիւրութիւն կ'ընճայէր. և  
ստուգիւ փորձն անյաջող կ'երթապ, բանզի  
սաւառնակի ծանրութեան տակ սառը կը

խորտակուի ու ջուրէն դուրս կը ցցուին ա-  
նոր կտորները. Գիշերը զննութեամբ կ'անցը-  
նենք: Ժամը մէկին սաւառնակին դէսը Ռի-  
սը-Լարսընը կը կանչէ, սառոյցը սկսած  
էր գէպի գործիքը յառաջնալ, ամէնքս  
ալ կ'արթ նանց ահազին դղրդումէն: Սա-  
ռոյցը սաւառնակը սեղմած է և կազմածը  
ճնշման տակ կը ճարճատի ու կը հեծէ,  
և երկարեայ կողերը տեղից կու տան:  
Ապահովաբար սաւառնակը կը կորսըն-

ցնենք : Էլլավորթ , Տիթրիչսըն , Ֆէօչ և ես , շնչառապար սաւառնակին մէջ եղած պաշարը և հանդերձանըն կը փոխազբնենք , մինչ Ռիսըր-Լարսըն և Օմտալ Կացնի հարուածով կատազօրէն սառը կը ջախ-ջախեն հոն՝ ուր աւելի է ճնշումը : Քանի մը վայրկեան վերջ կը յաջողին ճնշումը նուազեցնել , ու մեր համախումք ճիգով՝ սաւառնակը կ'ազատի , բարերախտաբար սաւառնենք պատին գլխաւոր մասը այլևս չի յառաջեր :

Յունիս երեքին մեկնելու համար նոր դաշտավայր մը կը հարթենք , բայց ան- բաւական է գործիքին շարժման և բար- ձրանալու այդքան փոքրիկ միջոցը : Այսու չենք ըներ հոն մալ , նոր ապաստանարան մը կը փնտանենք , կ'ուզենք 24 թիւին քով երթալ վասն զի հոն սառը աւելի քիչ կը շարժի , և ազատ ջուրի միջոցն աւելի ըն- դարձակ է , այնքան որ կրնայ իրեւ մեկ- նակւ ծառայել , ունենալով իր շորջը 200 մեղր երկայնութիւն . Ռիսըր-Լարսըն ծայրագոյն խոհեմութեամբ սաւառնակը յառաջ կը մղէ , որպէս զի գործիքն ա- զատէ , բայց նեղ կէսին մը խորտակուելու վտանգին կ'նենթարկուի , ճնշումը այնքան հզօր է որ քանի մը աեղեր ճմլած են :

#### ՏԱՐԱՎԱԾՄԱՆ ԽՈՇՀԱՆՔ ԵՒ ՀԱՌՈՒՄՆ.

Ռիսըր-Լարսըն կը փորձէ մօրուց երա- գել , յանկարծակի սաւառնակը կանգ կ'առնէ չնախատեսուած ու վտանգալից կիրճի մը մէջ : Կը խոյանանց սառը խորտակելու որովհետեւ կ'ըմրնենց որ կենաց և մահու հարց է : Ռիսըր-Լարսէն սաւառնակի ա- զատեւն՝ բովանդակ արագութեամբ սառա- կը մղէ զայն :

Մեն յոյսով կը սկսինք ասկինք առնենիս եղած հարթավայրը շակել , ընդարձակել : Ահա- զին աշխատութիւն է , որովհետեւ 300 մեղր երկայնութեամբ հարթավայրը սա- ռոյցի անհեթեթ և ցցուն կտորներով ծած- կուած էր : Առաւտեան ժամ երկուրին կը սկսինք աշխատիլ մինչև զիշեր , մինչեւ որ գոհացուցիչ կերպով կը մաքրուի : Բոլոր այս ժամանակամիջոցին մէջ կը ջանանք

սաւառնակի ցոռւկը սառի ճնշումէն ազա- պահել , բայց ամէն մեղրին սառը կը կըծ- կուի գործիքին տակ : Կը կտրենց , կը սղո- ցնենց , կը կոխկոտենց մինչեւ որ սրահակի պէս բան մը կը ձեւանայ նաւու ողնա- փայտին տակ :

Վերջապէս 25թիւ սաւառնակը փրկուած է : Մինչ գոհուեթեան շունչ մը կ'առնենց , ահա զարձեալ սառոյցի խոշոր կտրոր մը , նոր պատուար մը կը կազմէ : Այսն գիշերը 24 թիւը , չկարենալով սառի ճնշումէն փրկել՝ ծանը կերպով կը վտանգուի : Յու- նիս հինգի զիշերը շատ քիչ ցնացանք : Կ'որոշենց մինչեւ յունիս 15 սպասել , յետին որոշողութիւնը առնելու համար . կամ թողրել 25 թիւը և բալելով Գո- լումպիա զլուկին երթալ , և կամ հոս մնալ յուսալով կարենալ թոշիլ պաշարեղէն- ներու սպասելէն տառչ :

Այս որոշողութիւնը ամենէն ծանրա- կշոր պիտի ըլլար : Ոտնիկը անձգուին երեք կլինենքի վերածուած է . ընդհակա- ռակն , բարաօն առատացած է զգալ մը կաթի փոշիով և մալտակաթի տասը բլիթ- ներով , որոնք կը թուին թէ զօրացուցիչ են : Բարոյական ուժերնիւ լաւ է , աշխա- տութեան ատեն կը շաղակրատենք և կը զուարձանանք :

#### ՍԱՌԵՌՈՒԻ ԽԵՆ ՓՇՇՈՒՄՆԵՐԻ.

Յունիս հինգին Ռիսըր-Լարսըն ու Տի- թրէչսըն բալմիւռով արշաւանք մը կատա- րեցին թռչելու համար աւելի ընդարձակ տեղ մը վինտելու նպատակով . որով- հետեւ այլևս անօգուտ էր երկարօրէն սա- ռոյցին հետ մաքանիլը , վասն զի մէջ կող- մէն հազիւ կը բանանք , կը մաքրենք , միւս կողմէն զարձեալ կը գոցուի : Հիմայ ան- ընդհատ հոծ մշուշի մը մէջ կը գտնուինք , ամենադժուարին է իրարու հետ յարա- բերութեան մէջ մնալ :

Ռիսըր-Լարսըն և Տիթրէչսըն կէտ մը կը հասնին ուր արեգակը պատառուածքէ մը կը լուսաւորէ հետուն 500 մեղր լայնու- թեամբ ջրանցք մը , զոր կարելի է ջրոյ ճամքու մը վերածել , և կը սկսին վերպա-

ծելու, բայց ամրողջապէս մառախլապատ է: Ճեղպով կը զառնան ընկերներունքով՝ իմացնելու թէ կարելի էր սաւառնակը հնա փոխադրել որ, ութէարիւր մեղք հեռու էր մեր գտնուած տեղէն: Կ' ննթաղբեմ որ երկու օր պէտք է գործիքի փոխադրութեան համար. յոյսերնիս կ' արծարծի: Յունիս վեցին մերձակայ շրանցքի մը վրայ բաւական առաջ կ' երթանք, բայց զիշելը երբ կը վերազանանք՝ նորին ձևացած է սառը: Ուստեղ ժամանակ չկայ, սառը սաւառնակին ցոռնը կը սեղմէ, մօրօները կը բանեցնենք ու սաւառնակը կը յաջողի թիչ մը բարձրանալ մեր պատրաստած զառիվայրին համանելու չափ: Մերկ չնորհած բախտին համար՝ Երկնքի շնորհակալ կ' ըլլանք. բայց այն ինչ տեղուն վրայ կը զառնանց ճամբան առանալու, սառը վերըստին կազմուած է, մինչ սառը կը շրանցնակէ 25 թիւ գործիքը սեղմէլ, մենց մեծ աճապարանօց ճամբայ կը շիննեց:

Նկատի առնելով վերջէն զալիք ապագայ ծանր աշխատութիւններն՝ ընթրիքին համար անձ զլուկի 40 կրամ միու աւելի կը տրուի:

Յունիս եօթինին՝ Երեք մեղք հաստութեամբ սառնեղէն՝ պատի մը մէջ որ ճեղքուածքի մը վրայ կամուրջ կը ձևացնէր, անցք մը կը բանանց: Արարտանօց կը քըշնէնք սաւառնակը կամուրջին վրայէն որ ջառ դիմացիուն չէր: Սաւառնակի թեւերուն անցնելու բաւարար միջոց չկայ, մենք ոչ ուժ և ոչ ալ ժամանակ ունինք ամենահարկաւոր աւելի սառը խորտակելու: Բարեկախտաբար գործիքը կը յաջողի անցնիլ մերձաւոր սառնեղէն դաշտը:

ԱԱԱԱԱԳՐԱԿԱՆ ՈԲՈՇՄԱՆ ՕՐԸ.

Յունիս ութին կ' լուզենք մեկնիլ, սակայն կը բռնադատուինք մէկի նետելով հարաւի հովին հետ եկած տաղողկալի և թոյլ ծիւնը, տասներկու մեղք լայն ու վեցհարիւր մեղք երկայն ճամբայ մը բանալ, որպէս զի գործիքին տակը ողորկ, սահուն սառ ըլլայ: Այսպէս լիայսոյ մեռք կը զարնենք ուզինք բանալու միշտ դէպի առաջ, հետզետեւ

հանդիպելով փորիկ ճեղբուածներու, ուրոնք եթէ անտես մնային՝ պիտի կարենային մեր չուն խափանել:

Կը սկսինք սառը ծեծել, կոտրել հարթելու համար. յունի տամներկուցին և տասներեցին կը ջարդենք, կը ջարդենք, կը ջարդենք: Աշխատութեան միջոց կը նշմարենք որ երկու վայրի բաղեր և կարձաթեւ մը դէպի հիսկա-արեւելք կը թըուչին: Յունիս տասներեցին, արդէն հինգ-հարիւր մեղք ճամբայ բացած ենք. առաջնակին նոր շրանցք մը կը բացուի ջուր ողուս ցայտելով ճեցերէ Գործիքը շարժման մէջ դնել կ' աշխատինք, բայց զարկը չափազանց տակր է. այն ատեն նաէն դուրս կը նետենք ինչ որ աւելորդ կը թուն լուսանկարի գործիքներ, զգեստներ, հրացաններ, բալիթներ, կերակրեղիններէն մաս մը, կտաէ մակոյկ մը, ևս հրացան մը կը պահեմ Սրբազերկնի թըուչունները որսալու համար: Այսպէս ծանրութիւնը 1900 ցիւրյի կ' իջնէ:

Մեկնելու նոր փորձ մ'ալ կ' ընենք, բայց չենք յաջողիր՝ ճամբուն վիճակին և ցամիի պակասութեան համար: Տասնը-հինգ յունիսը ճակատազրական որոշումի օրն է: Բարեկախտութեան սասինանը զըռյէն երեք զիծ վար կ' իջնէ:

Հարաւ-Արևելեան ցուրտ հովիկ մը մեր կացութիւնը կը բարւոքէ, կը մտնենք սաւառնակ, ամէն որ իր տեղը կը զրաւէ, ու մերենաները կէս ժամուան շարժումով տացած լւա կը գործին:

#### ՎԵՐԱԴԱՐՁԻ Ի ՍԲԻՑՊԵՐԿԸՆ

Մինչ սաւառնակը մեղմօրէն դէպ առաջ կը սահի, ամէնքս ալ կը զզանք որ գերազոյն վայրկենի մը մէջն ենք:

ՈՒԽՈՐՐ-ԼԱՐՍԵՆ կը զզայ որ թոշլ փորձելու մեծ հնարաւորութիւն կայ: Կը յիշեցնենք իրեն որ ամէն վայրկեան սառը կրնայ կոտրիլ և նաւուղիզ սառուցեալ մակարդակին անհարթութեանց, որ ընթացքն երագելու արգելք կ' ըլլան, ուշադիր պէտք է ըլլայ:

Հարիւր, երկու հարիւր, երեք հարիւր

մեղք կը նվաճանանց միշտ աւելի մօտենա. առանց գիտնալու ո՛ւր, ու կնդրիտն ալ լով ճամբուն ծայրը, սակայն առանց կա- առանց գիտնալու ո՛ւր, ու կնդրիտն ալ լով ճամբուն ծայրը, սակայն առանց կա- չսպասի:

բենալ երազութիւնն աւելցնելու, այնու Լոյսը բաւական է սաւառնակն այն կողմը հանդերձ վերջը բաւական կ'ըլլայ սառ- դարձնելու՝ ուր ցատար երկիր կը նշմա- նելին արահակի մը վրայն ցատը լու և բենք, Մշուշը հետզհետէ կը թանձրանայ, ապա թոփշն առնելու:

ՓՐՈՒՏԱԿԸ ԵՆՔ.

Վերջապէս օդին մէջն ենք: Դիւրին է մեր զգացումները գու- շակել. վստահ մեքենաներուն վրայ՝ այլեւս վերտարձած կը նկատենք զմեզ: Տիթրիչուն կը սաւառնի՛դէպի Հինորէնինեղոց ուղղելով իր թոփշը: Հարաւ- Արեւելեան ցամին է տիրողը, հոծ մշուշը մը որ կը ստիպէ զմեզ ի սկզբան հարիւր մեղք բարձրութեան վրայ մնալ. Մշու- շէն վեր բարձրացած՝ կրնանց արեգակնային կողմացոյցը գոր- ծածել:

.Տիթրիչուն ըստ կարեւույն ստէպ կը կատարէ ուղղութեան վրայ զնութիւններ ու ցոյց կու- տայ Ռիսըր-Լարսընի ընթացքի ուղղութիւնը:

Հիմայ հազար մեղք բարձրու- թեան վրայ ենք: Գիշ մը յետոյ մշուշէն բոլորովին ազատ, մեցե- նաները սքանչելապէս կը գոր- ծեն, Ռոճիկնիս սպառած է, տուրմ, թէյ, կրկնեփ կը լափենք: Հարցն այն է թէ կողըիտը (պենզին) պիտի բաւէ: Օմուալ որ բաշ- խումին կը հսկէ, միշտ Ռիսըր- Լարսընը տեղեակ կը պահէ կա- ցութեան, մինչդեռ սպառումը որ Տիթրիչու- սընի հակակշիրին տակն է, ցոյց կու- տայ թէ ապահովապէս պիտի կարենանց մեր սահմանեալ տեղը հասնիլ:

81°, 33' զուգահեռականը անցնելով, մշուշի խափ մը մէջ կը մանենք, ալ ցա- մար երկրի կը մօտենանց, այլ ևս մշու- շէն վեր չենք բարձրանար, որպէս զի զահավիժական էջրի մը չըռնաղատուինք



ԲԱԵՊԱԽՈՎՅԱ ՌԻՍԸՐ-ԼԱՐՍԸԹ

կտոր մը տեղ 5-10 մեղք բարձրութեամբ կը սաւառնին հոծ մշուշի մէջ: Ապա բո- վանդակ երազութեամբ կը սկսինք ըիշ ըիշ աւելի բարձրանալ, հեռուէն Մրեցպեկընի լեռները կը տեսնուին:

Գիշ ի թեւեռ սաւառնումը իր վախճա- նին հասած է: Ցուրտ ըլլալու չափ զով հովիկ մը Հինորէնի նեղուցէն դէպի բա- ցերը կը գիշէ:

## ՎԵՐՋԻՆ ԱՐԿԱՆԸ.

Չուն դէպի Հիւսիսային Գլուխ ուղղուած է ըստ կարեւոյն փութով ցամաց հասնելու համար։ Սաւառնումի վերջին պահուն, Ռիսըր-Լարսըն կ'անդրագանայ որ հաստատութեան զեկերը հետզեաէ աւելի գուարութեամբ կը շարժին . . բաց ծովի իշխելն արկածալից է, ուստի կը շանայ կրցածին չափ առաջ վարել։ Ֆէօ և Օստալ կ'աշխատին աւրուածին պահանառը զանել, բայց թոշելու ժամանակ կարելի պիտի շըլլայ շտկել։ Հուսկ զեկերը բոլորվին անգործածելի կը զառնան, այն ժամանակ Ռիսըր - Լարսըն երկայնութեան զեկերը ձեռք կ'աննէ։ Ավակայն հակառակ քային այնքան բռնացեր է և այնքան կատաղի որ անկարել կ'ըլլայ շարունակել, հարք է ծով իշխել Մենց հինգերնիս սեղանատան բամբին մէջ կը բաշուինք, որպէս զի ցուուկը ջուրէն վեր բռննենք։ Երեսուն վայրկենի չափ մրցեալ ծովուն վրայ մաւլէն յետոյ, ուր նաւուզզին քաջութիւնը խիստ փորձի մենթարկուեցաւ, Հիւսիսային Գլուխն կը հասնինց։ Քովերնիս հազիւ հազ հարիւր միոր կնորիտ մնացած էր, որ սովորական պայմաններու մէջ, Հոսպի նաւուն հետախուզավայրը կրնար հասցընել։

## ԱՍՏՈՒԽՈՑ ԵՆՈՐՀԱԿԱՅ Կ'ԸԼԼԱԽՆՔ.

Ցամաց երկիր երկրորդ անգամ սար մէնեն այնպիսի զգացումներ կ'արթնցնէ մէջերնիս որ դուռարին է նկարագրել։ Ամէնքն ալ Աստուծոյ շնորհակալ կ'ըլլանց չորս շաբաթ մահուան զէմ մղած մարտին մէջ մեզ պարզեւած օգնութեան համար։ Կը նախաճաշենց զաւաթ մը բարայով և երեք կրկնեալով, զի բաղցը իր ներկայութիւնը զզալ կու տար։ Բրիմուի վառարանը պատրաստ էր մեզի ճաշ մը պատրաստելու, երբ մեզմէ մէկը ձկնորսի նաւու մը հոն ըլլալը կ'իմացնէ։ Ամէնքն ալ սաւառնակին եզերը կը վազենց բարձրածայն աղաղակներով։ Պալսփորդէն եկող, Ալոյիվն է, Նէլս Վոլլան նաւապետին հրա-

մանատարութեամբ, որ անհուն զեղուամով մը զմեզ ներս կ'ընդունի։ Թունիս 19ին ժամը մէկին վերջապէս թինկապէչ կը հասնինց, ուր կը զանենց Հիյմանալ նաւու, Հոսպի երկու սաւառնակներ, Քինկապէչի ածուխի ընկերութեան տեսուցը, Քնուցըն, աննման ասպըն-Հակալը, ճշմարիտ արքայավայել ընդունելութիւն կ'ընէ, որուն հիւրասիրութիւնը լաւու չափ կը յուզէ զմեզ։

ԱԱԱԱԱ ԱՄՈՒԽՍԱԾՆ  
ԹՐԱՅ. Հ. ՄՐԱՎԻՌ ԱՒՐԱՆՀՈՒՅԱՆ

## ԳԱՐԱՎԱՅՐԻ ԱՌԴԻՒԾԻ

Ս. Գետրոսի (Հոռվմ) այցելուները անշուշտ կը յիշեն այն երկու առիւծները - մին քուն, միւսն արթուն - զորս Քանովա՛ Մաքսիմոս Պապին մահարձանին պահապան դրեր է։

Այն հանճարը որուն զլուխ - գործոցներին են այդ զյզգ մը առիւծները, զարմանալի հակամիութիւն մ'ունեցաւ դէպի առիւծը։

1823ին, վենետիկեան տարեցոյց մը, Քանովայի մահուան տարենդարձն՝ այս միշադէպը կը պատմէ։ Վենետիկոյ ֆալիէր պատրիկ ընտանիքը իննոյք մը կու տար. երբ ինոհարն անձրէր էր թէ ինչ պատկեր կամ մենք աշանդէրն մէջ տեղ, Քանովա՛, որ հազիւ 13 տարեկան էր դիպուածով նոն զսնուելով այդ նեղ պարագային անմիշապէս կարագէ առիւծ մը շնորհ այնպիսի ճարտարութեամբ որ բազմականներն զմայլեցան։

Ասկից՝ ֆալիէր ծերակուտականը, որ գիտութեան և արուեստի սիրահար մ'էր, իր ինամքն տակ պատ զանի և այսպէս սկսու վայրի հորիզոնին վրայ Քանովայի փառքին աննման արեգակը,

